



ԱԼԱՎԵՐԴԻ ՕՐՀՈՒՄ ԿԵՆՏՐՈՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ
PUBLIC ENVIRONMENTAL INFORMATION CENTRE OF ALAVERDI

ԳՅ Լոռու մարզ, ք.Ալավերդի,
Զորավար Անդրանիկի 8/1, 403 սենյակ
հեռ. (+374) 25324114, 91199324
էլ. փոստ info_alaverdi@artus.am
anushevoyan@rambler.ru

Լոր, Alaverdi,
Zoravar Andranik str. 8/1, 403
Tel. (+374) 25324114, 91199324,
E-mail info_alaverdi@artus.am
anushevoyan@rambler.ru

ՀՀ Լոռու մարզի Նեղոց համայնքի ղեկավար
Պարոն Ս. Բեգջանյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Բեգջանյան,

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 27, 27.1 և 33.2 հոդվածները, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ Ալավերդու Օրհուս կենտրոնին տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

«Վալլերս» խմբի ընկերությունների մեջ մտնող «Թեդուտ» ՓԲԸ-ն նախատեսում է Լոռու մարզի անտառային տարածքներում, Շնող գետի ավազանում/Ալավերդի, Շնող, Հաղպատ, Մաղկաշատ, Նեղոց/, իրականացնել պղնձի և մոլիբդենի որոնման աշխատանքներ:

1. Ե՞րբ է Ձեզ ներկայացվել հայտի փաթեթը եւ ու՞մ կողմից

2. Տրվե՞լ է արդյոք Ձեր կողմից գրավոր համաձայնություն՝ համայնքում ուսումնասիրման աշխատանքներ իրականացնելու համար, եթե այո, խնդրում եմ տրամադրել նշված փաստաթղթի պատճեն:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում եմ գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումը:

Շնորհակալություն:

Հարգանքով՝

Ալավերդու Օրհուս կենտրոնի համակարգող

Անուշ Էփոյան

24.08.2015թ.